Նարինե Կարապետյան[1]

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

XX դարի վերջին տասնամյակի և XXI դարի սկզբում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք առանձին պետությունների և տարածաշրջանների աշխարհաքաղաքական, իրավաքաղաքական դաշտը ենթարկեցին զգալի փոփոխությունների, իրավագիտության առաջ դրեցին մի շարք ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ խնդիրներ, որոնց լուծումը դյուրին կդարձնի պրոգրեսիվ զարգացումը:

Մեր ժամանակների ակտուալ խնդիրներից են տարաբնույթ ներքին զինված ընդհարումները, որոնք, ըստ էության, հասարակական կյանքի սոցիալական և քաղաքական հակասությունների արտահայտման միջոցներ են:

Բազմադարյան պատմության ողջ ընթացքում զինված հակամարտությունները հիմնականում միջազգային բնույթի էին, և, ըստ Կարլ Ֆոն Կլաուզևիցի, հանդիսանում էին պետությունների միջև այլ մեթոդներով քաղաքականության շարունակության օրինակ[2]: Թեև միջազգային իրավունքն արգելում էր ագրեսիվ պատերազմը և ճանաչում այն որպես միջազգային հանցագործություն, այդուհանդերձ XX դարի երկրորդ կեսից առ այսօր տեղի են ունեցել մի քանի տասնյակ հակամարտություններ, որոնց հանդեպ «պատերազմ» սահմանումը կիրառելի չէ, ավելին՝ դրանցից շատերը սկսվել են դիվանագիտական հարաբերությունների պահպանման պայմաններում, ինչն էլ հանգեցրեց քաղաքագիտության և իրավագիտության մեջ «զինված ընդհարում» հասկացության կիրառությանը:

Բացի այդ, վերջին շրջանում դիտվում է ներքին զինված ընդհարումների աճի կայուն միտում: Օրինակ, Ստոկհոլմի՝ աշխարհի խնդիրների ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի 1994 թ. տվյալներով՝ աշխարհի 27 կետում տեղի ունեցող ավելի քան

---

[1] ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Կ. Ա. Գևորգյան:

[2] **Бунин А. В., Лопатников В. А.**, Некоторые аспекты права вооруженных конфликтов. Учебное пособие, Н. Новгород, 2003. с. 4.

30 զինված ընդհարումներից և ոչ մեկը չէր տեղավորվում երկու կամ ավելի երկրների միջև «դասական» պատերազմի սահմանմանը: Յուրաքանչյուրի դեպքում վեճը վերաբերում էր տարածքի կամ հակամարտող կողմերի իշխանությանը պետության ներսում, թեև որոշ դեպքերում առկա էր միջպետական բաղադրիչը՝ հակամարտող կողմերից մեկին այլ պետության կամ պետությունների կողմից աջակցության տեսքով[3]:

Զինված ընդհարումն առհասարակ բնութագրվում է տարածաշրջանի բնակչության մեծ ներգրավվածությամբ, որը պայմանավորված է անկանոն զինված միավորումների դիվերսիոն և ահաբեկչական մեթոդների լայն կիրառմամբ, զինված ընդհարումը քաղաքացիական (ներքին) կամ լոկալ (միջազգային) պատերազմի վերածվելու վտանգով և այլ հանգամանքներով: Ընդ որում, քաղաքացիական պատերազմները իրենց բնույթով առանձնանում են, քանի որոշ պայմաններում դրանք կարող են վերաճել ներքին զինված ընդհարման:

Ի տարբերություն քաղաքացիական պատերազմի, որի նպատակը պետական իշխանությունը գրավելն է, ներքին զինված ընդհարման նպատակը ինքնորոշման ու տարածքային պատկանելիության, սոցիալ-մշակութային առանձնահատկությունների և կրոնական արժեքների հաստատումն է[4]:

Ի.Ն.Արցիբասովն առաջարկում է միջազգային բնույթ չկրող ներքին զինված ընդհարումը քաղաքական լարվածության այլ ձևերից տարբերել՝ որպես չափանիշ ընդունելով դժգոհությունների կոլեկտիվ բնույթը: Ըստ նրա՝ առանձին անարխիստական, հակակառավարական դրսևորումները, ներքին կարգի խախտման դեպքերը, ներքին լարվածության (օրինակ՝ անկարգություններ) առաջացումը չեն կարող դիտվել որպես ներքին զինված ընդհարում, դրանք վերաբերում են ներքին լարվածության և անկարգությունների այն իրավիճակներին, երբ զինված ընդհարման պայմանների բացակայության դեպքում պետությունը ուժ է կիրառում՝ օգտագործելով ռազմականացված իրավապահ մարմինները, իրավակարգի և օրինականութ-

---

[3] **Егоров С. А.,** Актуальные проблемы права вооруженных конфликтов. М.Дипакадемия МИД России, 2000. с.102.

[4] **Рыльская М. А.,** Указ. соч., с. 6.

յան պահպանման ու վերականգնման նպատակով[5]:

Սակայն չի կարելի բացառել նաև այն, որ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումը՝ որպես ուժի կիրառմամբ սոցիալական շերտերի միջև ծագած հակասությունների լուծման ձև, կարող է հանդիսանալ սոցիալ-քաղաքական բնույթով արտակարգ վիճակի օրինակ, որի ծագման պատճառները կարող են լինել ինչպես տարբեր տեսակի կոնֆլիկտները (տնտեսական, քաղաքական, ազգամիջյան, կրոնական), այնպես էլ քրեորեն պատժելի արտակարգ հանգամանքները:

1990-ականներից առ այսօր շարունակվող նախկին ԽՍՀՄ տարածքում ինքնիշխանության հետ կապված սոցիալ քաղաքական գործընթացների պայմաններում արդիական է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների իրավական կարգավորման խնդիրը: Այս ենթատեքստում առաջնային կարևորություն են ստանում միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների իրավունքի հետ կապված երկու հիմնական խնդիրներ.

- միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման, ներքին անկարգությունների և ներքին լարվածության այլ իրավիճակների տարբերակման իրավական չափանիշների մշակման անհրաժեշտությունը, որոնք կարող են հիմք հանդիսանալ կառավարության կողմից համապատասխան քաղաքական որոշումներ կայացնելու համար,
- միջազգային բնույթ չկրող ընդհարումների պայմաններում մարդու անքակտելի իրավունքների սահմանափակման թույլատրելիության և դրա սահմանների որոշման հետ կապված սկզբունքային խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Անկախ բնույթից (միջազգային, ներքին, սոցիալական, ազգային-ազատագրական) և իրավական ասպեկտից (ագրեսիվ, պաշտպանական, երկրի ներսում անջատողականների զինված գործողություններ, կառավարական զինված ուժերի գործողություններ) այդ բոլոր զինված ընդհարումները վտանգում են մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացումը՝ այդ թվում մարդու առաջնային, բնական կյանքի իրավունքը:

Ցանկացած իրավիճակում մարդու իրավունքների պաշտպա-

---

[5] **Арцибасов И. Н., Егоров С. Л.,** Вооруженный конфликт. Право, политика, дипломатия. М., Международные отношения, 1989, с. 117.

նության անհրաժեշտությունը սկզբունքային կարևորություն ունի, և այս առումով միջպետական համագործակցության կարևոր ուղղություններից է ինչպես միջազգային, այնպես էլ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Թեև ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է ագրեսիվ պատերազմը, այնուամենայնիվ դա դեռ չի նշանակում, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում վերացել են տարաբնույթ զինված ընդհարումների հնարավորության հիմք հանդիսացող պետությունների միջև լարվածության աղբյուրները և ցավոք, զինված ընդհարումները ներկայիս աշխարհակարգում մարդկության զարգացման ժամանակակից փուլի օբյեկտիվ իրականությունն են:

Այն դեպքերում, երբ հնարավոր չէ կանխել պետությունների միջև և երկրի ներսում զինված ընդհարման բռնկումը և սպառված են ընդհարման կանխման բոլոր հնարավոր միջոցները, միջազգային իրավունքը սահմանում է մի շարք նորմեր, որոնց հիմնական նպատակը ռազմական գործողությունների վարման մեթոդների և զինատեսակի ընտրության սահմանափակումն է, և առավել դաժան ու անմարդկային միջոցների կիրառման արգելքը, ինչպես նաև պատերազմի զոհերի և հատուկ կարգավիճակ ունեցողների իրավունքների պաշտպանությունը:

Այդ նորմերը միջազգային իրավունքում կոչվում են միջազգային մարդասիրական իրավունքի նորմեր (ՄՄԻ), որոնք սահմանափակում են ռազմական գործողություններ վարելու միջոցներն ու մեթոդները, սահմանում զինված ընդհարման ժամանակ կողմերի համար իրավաբանորեն պարտադիր որոշակի վարքագծի կանոններ, ինչն օբյեկտիվորեն նպաստում է ցանկացած բնույթի զինված ընդհարումների հումանիզացմանն ու պատերազմի ծավալների և բացասական հետևանքների սահմանափակմանը:

Ի սկզբանե ՄՄԻ-ի նորմերի մեծամասնությունը կոչված էր կարգավորելու հասարակական հարաբերությունները զինված ընդհարումների պայմաններում: ՄՄԻ-ի հիմնական աղբյուր հանդիսացող 1949 թ. օգոստոսի 12-ի չորս Ժնևյան կոնվենցիաներն ի սկզբանե կարգավորում էին միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ ծագող հարաբերությունները, քանի որ ներքին ընդհարումներն անդրադառնում էին պետությունների ինքնիշխանության հարցերին,

իսկ պետության ինքնիշխանությունը ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Այդ պատճառով ներքին ընդհարումների հանդեպ միջազգային հանրության ուշադրության ցանկացած դրսևորում հակադարձվում էր՝ ելնելով այն համոզմունքից, որ ներքին խնդիրները պետք է լուծվեն առանց արտաքին ազդեցության, ուստի ՄՄԻ-ի նորմերի կիրառումը ներքին ընդհարումների ժամանակ հերքվում էր պետությունների մեծամասնության կողմից: Բացի այդ, ՄՄԻ-ի նորմերը ներքին ընդհարման ժամանակ կիրառելը փաստացի կնշանակեր, որ ապստամբները, զինյալները և անօրինական զինված միավորումների այլ մասնակիցներ, որոնք կպահպանեն այդ նորմերը և դրանք խախտելու համար կկրեն պատասխանատվություն, կդիտվեն որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, և այս հանգամանքը պետությունների կողմից կտրականապես չէր ընդունվում:

XX դարում աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները ստիպեցին ընդունել, որ ներքին ընդհարումները ոչ պակաս տառապանքներ են պատճառում մարդկանց և հանգեցնում են նույն անցանկալի ավերածությունների ու նյութական վնասների, քան միջազգային զինված ընդհարումները:

Բավական է հիշել մի քանիսը, օրինակ՝ 1919-1922 թթ. քաղաքացիական պատերազմները Չինաստանում, 1920-ական թվականներին՝ Ռուսաստանում, 1940-ականներին՝ Իսպանիայում, 1927-1934 թթ. Նիկարագուայում, Սիրիայի ազգային-ազատագրական ապստամբությունը և այլն: Մեր ժամանակներում որպես օրինակ կարող ենք նշել ԼՂՀ-ում, Հարավսլավիայում, Հյուսիսային Օսեթիայում, Չեչնիայում, Աբխազիայում, Մերձդնեստրում տեղի ունեցած զինված ընդհարումները, քաղաքացիական պատերազմը Տաջիկստանում, ինչպես նաև վերջին իրադարձությունները Եգիպտոսում, Հարավային Սուդանում, Կենտրոնական Աֆրիկական Հանրապետությունում, պատերազմը Սիրիայում և Ուկրաինայում: Ինչպես տեսնում ենք՝ այսպես կոչված «ներքին պատերազմները» մարդկային զոհերի քանակով և նյութական վնասի չափով գերազանցում են միջազգային պատերազմների հետևանքները: Ի դեպ, հարկ է նշել, որմիջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների հակամարտող կողմերի հարաբերությունները ավելի դաժան բնույթ են կրում, քան միջազգային ընդհարումների, քանի որ ներքին ընդհարումներն ուղղորդվում են

մասսայական սպանություններով, էթնիկ զտումներով, թալանով, կողոպուտով, բռնաբարություններով, որոնք հանգեցնում են խաղաղ բնակչության շրջանում մեծաքանակ զոհերի։

Այս առումով ՄՄԻ-ի հիմնահարցերն ուսումնասիրող Ֆ. Մարտենսը նշում է. «Միջպառակտչական պատերազմները հակառակորդների մեջ ավելի մեծ ատելություն են առաջացնում, քան անկախ ժողովուրդների միջև պատերազմները, հետևաբար այդ պատերազմների ժամանակ դժվար է պատերազմի սովորույթներով և օրենքներով սահմանել ամենաթողության ու բռնության սահմանները»[6]։

Այս օբյեկտիվ իրականությունը մատնանշում է ներքին հակամարտությունների բազմակողմանի, առավել մանրակրկիտ և հստակ կարգավորման անհրաժեշտությունը։

Ինչպես հայտնի է՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լայն տարածում ստացան մարդու իրավունքների մասին գաղափարները։ Դրանց զարգացման համար հիմք հանդիսացան պատերազմին հատուկ զանգվածային սահմռկեցուցիչ հանցագործությունները, որոնք կատարվել են ոչ միայն վիրավոր և հիվանդ կոմբատանտների, այլև քաղաքացիական բնակչության հանդեպ։

Ի պատասխան ֆաշիզմի կողմից դրսևորած ագրեսիայի և մարդկության դեմ հանցագործությունների, միջազգային հանրության կողմից ստեղծվեց Միացյալ Ազգերի Կազմակերպությունը (ՄԱԿ)։

1944 թ. Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսում ընդունված ՄԱԿ-ի կանոնադրությունը պարտավորեցնում է պետություններին պահպանել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները անկախ ազգությունից, սեռից, լեզվից և դավանանքից։ (1-ին հոդվ. 3-րդ կետ)։ Ավելին, Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանվեց, որ միջազգային իրավունքի չմիջամտելու սկզբունքը չի վերաբերում VII գլխով նախատեսված հարկադրական միջոցների կիրառմանը։

Այս դրույթներն իրավական հիմք հանդիսացան մարդու իրավունքների խախտումներ արձանագրելու դեպքում երկրի ներքին գործերին միջամտելու համար։

Ժամանակակից միջազգային իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում համապատասխան պայմանագրե-

---

[6] **Гончаров И. В.,** «Защита прав человека в условиях внутренних вооруженных конфликтов» //http://www.k-press.ru/bh/2002/2/.../rgoncharov.asp/

ին միացած երկրներից պահանջում է միակողմանի ստանձնել մարդու իրավունքների պաշտպանության պարտավորությունը։ Միջազգային հանրության կողմից մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու խնդիրներն արդեն չեն համարվում պետության ներքին գործը։

Զինված ընդհարումների ժամանակ կիրառվում է ինչպես մարդու իրավունքների միջազգային իրավունքի (ՄԻՄԻ), այնպես էլ ՄՄԻ-ի նորմերը։ Միջազգային իրավունքի այս երկու ճյուղերը առկա բոլոր տարբերություններով հանդերձ, ունեն մեկ նպատակ՝ ցանկացած պայմաններում ապահովել հարգանք մարդու արժանապատվության հանդեպ։

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը սահմանում է, որ Դաշնագրի մասնակից պետություններն արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, կարող են միջոցներ ձեռնարկել դաշնագրով ստանձնած իրենց պարտավորություններից շեղվելու համար։ Սակայն, նշյալ դրույթը չի կարող հիմք հանդիսանալ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորություններից շեղվելու համար։ Այսինքն, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի ամենահիմնական նորմերը շարունակում են գործել ցանկացած բնույթի զինված ընդհարումների ժամանակ։ Այդուհանդերձ ՄՄԻ-ի կիրառումը զինված ընդհարումների ժամանակ առավել արդյունավետ է, քանի որ այն հստակ ուղղված է զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների խախտումների սահմանափակմանը։ Այդ արդյունավետությունը մասամբ պայմանավորված է նաև նրանով, որ 1949 թ. Ժնևյան կոնվենցիաները և դրանց 1977 թ. երկու Լրացուցիչ արձանագրությունները վավերացված են միջազգային հանրության ավելի լայն շրջանակի կողմից, քան մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի մեծամասնությունը։ Ներկայումս II Արձանագրությունը վավերացված է աշխարհի պետությունների մեծամասնության կողմից (168 պետություն՝ ըստ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի պաշտոնական կայքի)։

Բացի այդ, ՄՄԻ-ի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրա նորմերը կիրառվում են զինված ընդհարման բոլոր կողմերի հանդեպ, և հաճախ կողմերը համոզվում են

ՄՄԻ-ի նորմերի պահպանման արդյունավետության մեջ, քանի որ հակառակ կողմը նույնպես կրում է խախտումներ չթույլատրելու փոխադարձ պարտավորությունը[7]:

Ըստ կիրառվող իրավանորմերի՝ ՄՄԻ-ը տարբերում է զինված ընդհարումների չորս տեսակ.

- միջազգային զինված ընդհարումներ, որոնց պայմաններում կիրառվում են 1949 թ. Ժնևյան կոնվենցիաները և 1977 թ. դրանց Լրացուցիչ Արձանագրությունները, Հաագայի իրավունքը և այլ նորմեր,
- Ազգային ազատագրական պայքարի վերածվող միջազգային զինված ընդհարումներ, որոնք հիմնականում սահմանվում և կարգավորվում են 1977 թ. I-ին Լրացուցիչ Արձանագրությունով,
- միջազգային բնույթ չկրող ընդհարումներ, որոնք կարգավորվում են Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածով, ինչպես նաև սովորութային իրավունքի որոշ նորմերով,
- միջազգային բնույթչկրող զինված ընդհարումներ, որոնք սահմանվում են առանձնահատկությունների բավականին նեղ շրջանակով և կարգավորվում են 1977 թ. II-րդ Լրացուցիչ արձանագրությամբ[8]:

Քանի որ մարդասիրական իրավունքի նորմերի կիրառումը կախված է զինված ընդհարման առանձնահատկություններից, ուստի մարդու իրավունքների պաշտպանությունն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկ է տարբերակել միջազգային չկրող զինված ընդհարումները, ազգային ազատագրական պատերազմները, միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումները, որոնք կարգավորվում են II Լրացուցիչ արձանագրության շրջանակում և այլ իրավիճակներ: Այս առումով միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների սահմանված չափանիշներին այս կամ այն իրավիճակի համապատասխանությունը որոշելիս կարևոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ:

Մարդասիրական իրավունքի համաձայն՝ զինված ընդհարումը որակվում է որպես միջազգային բնույթ չկրող ընդհարում, եթե առկա են դրա համար սահմանված բնութագրիչները: Դրանք են՝ ռազմական

---

[7] Учебное пособие по контролю за соблюдением прав человека. Университет Миннесоты, гл. XVI http://www1.umn.edu/humanrts/russian/monitoring/Rindex.html /

[8] Учебное пособие по контролю за соблюдением прав человека. Университет Миннесоты, гл. XVI http://www1.umn.edu/humanrts/russian/monitoring/Rindex.html /

գործողություններին մասնակցող զինված խմբավորումները պետք է դրսևորեն կազմակերպվածության նվազագույն աստիճան, իսկ զինված ընդհարումները պետք է հասնեն նվազագույն ուժգնության[9]:

Տվյալ չափանիշների առկայության փաստը հաստատվում է յուրաքանչյուր առանձին դեպքի ուսումնասիրությունից հետո, ինչը նախատեսում է մի շարք փաստական հանգամանքների ուսումնասիրություն:

Ընդհարման ուժգնության մակարդակը որոշելիս հաշվի են առնվում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսին են զինված ընդհարումների տևողությունը և լրջությունը, մասնակից կառավարական ուժերի տեսակները, ռազմական գործողություններով պայմանավորված մարդկային կորստի և նյութական վնասի չափը:

Զինված խմբերի կազմակերպվածության մակարդակը որոշվում է հրամանատարական որոշակի կառուցվածքի առկայությամբ, հրամաններ արձակելու և դրանք կատարելու ունակությամբ, ռազմական գործողություններ պլանավորելու և իրականացնելու ընդունակությամբ, ինչպես նաև նոր մարտիկներ հավաքագրելու, սովորեցնելու և զինելու ընդունակությամբ[10]:

Բոլորչ որս Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումներին վերաբերող 3-րդ հոդվածը կիրառելի է Ժնևյան կոնվենցիաները ստորագրած պետություններից մեկի տարածքում ծագած միջազգային բնույթ չկրող ցանկացած ընդհարման ժամանակ: Այդ դեպքում ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող անձինք՝ այդ թվում զենքը վայր դրածները, ինչպես նաև ցանկացած այլ պատճառով շարքից դուրս եկած, մարդասիրական վերաբերմունքի իրավունք ունեն: Այդուհանդերձ 3-րդ հոդվածը չի տալիս միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման սահմանումը: Բացի այդ, բոլոր արժանիքներով հանդերձ 3-րդ հոդվածը իր կիրառման ոլորտը անուղղակիորեն է

---

[9] Международно-правовая защита прав человека в вооруженных конфликтах. ООН Нью-Йорк и Женева, 2011. с. 43-46, մանրամասն տե՛ս. ICRC «How is the term «armed conflict <defined in international humanitarian law>//http://www.ohchr.org/Documents/Publications/HR_in_armed_conflict_RU.pdf/

[10] **Лаванд К.,** Внутренние конфликты и другие ситуации насилия-какая разница для жертв?//http://www.icrc.org/rus/resources/documents/interview/2012/12-10-niac-non-international-armed-conflict.htm

նշում, ու թեև այն, անշուշտ, պարտադիր նորմ է, սակայն դրա նորմատիվ բովանդակությունը սահմանափակ է, այն ներառում է ընդամենը ռազմական գործողությունների հետևանքներից մարդկանց պաշտպանությանը վերաբերող մի քանի կանոն:

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1968 թ. ընդունեց թիվ 2444 բանաձևը, որով կոչ արեց միջազգային հանրությանը մարդասիրության հիմնական սկզբունքները կիրառել բոլոր տեսակի զինված ընդհարումների ժամանակ, միաժամանակ՝ խնդրելով ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարին ԿԽՄԿ-ի հետ մեկտեղ ուսումնասիրել լրացուցիչ միջազգային կոնվենցիաների և համապատասխան այլ իրավական փաստաթղթերի ընդունման անհրաժեշտությունը ցանկացած զինված ընդհարման պայմաններում քաղաքացիական անձանց և կոմբատանտներին առավել արդյունավետ պաշտպանելու նպատակով[11]:

Վերոնշյալ որոշումների արդյունքում ԿԽՄԿ-ն նախապատրաստեց երկու արձանագրությունների նախագիծ, որոնք «Ժնևյան կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրություններ» վերտառությամբ ընդունվեցին 1977թ.:

II Լրացուցիչ արձանագրությունը նվիրված է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների զոհերի պաշտպանությանը:

Այդ փաստաթղթի 28 հոդվածները զարգացնում են ընդհանուր 3-րդ հոդվածի դրույթները և ընդլայնում են ներքին ընդհարումների ժամանակ բնակչության մարդասիրական պաշտպանությունը: ՄՄԻ-ի պատմության մեջ առաջին անգամ II Լրացուցիչ արձանագրությամբ արգելվեց քաղաքացիական անձանց դեմ ուժի կիրառումը և քաղաքացիական բնակչության վրա հարձակվելը: Բացի այդ, Արձանագրությունը տալիս է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման սահմանումը: Համաձայն 1-ին հոդվածի 1-ին մասի բովանդակության՝ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումներ են համարվում այն զինված ընդհարումները «…որոնք տեղի են ունենում որևէ կողմի տարածքում, վերջինիս զինված ուժերի և հակակառավարական զինված ուժերի կամ կազմակերպված այլ զինված խմբերի միջև, որոնք, գտնվելով պատասխանատու հրամանատարության ներքո,

[11] **Гончаров И. В.,** Защита прав человека в условиях внутренних вооруженных конфликтов //http://www.k-press.ru/bh/2002/2/.../rgoncharov.asp/

նշված կողմի տարածքի մի մասի վրա իրականացնում են այնպիսի վերահսկողություն, որը նրանց թույլ է տալիս իրականացնելու անընդհատ և համաձայնեցված ռազմական գործողություններ և կիրառել սույն արձանագրությունը»։

II Լրացուցիչ արձանագրությունը տալիս է ոչ միայն միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման սահմանումը, այլև միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման և արտակարգ դրության տարբերակումը։ Այսպես, արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ «անկարգությունները, բռնության առանձին ու պատահական գործողությունները և այլ նմանատիպ գործողությունները չեն կարող հանդիսանալ զինված ընդհարումներ»։

Թեև, ինչպես արդեն նշվեց, զինված ընդհարումների զոհերի պաշտպանությանը վերաբերող հիմնական կանոնները թվարկված են Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածում, սակայն II Արձանագրությունը զարգացնում է այդ դրույթները՝ փոխառելով ՄԱԿ-ի հիմնական փաստաթուղթ հանդիսացող և մարդու իրավունքները կոդիֆիկացնող 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի գաղափարները։ Արձանագրության 4-րդ հոդվածը բովանդակում է հիմնական երաշխիքներն ու սահմանափակումները, որոնք պետք է պահպանեն կողմերը իրենց իշխանության ներքո գտնվող անձանց հանդեպ։ Հոդվածի նպատակը ներքին զինված ընդհարման ծավալման դեպքում ամբողջ տարածքի բնակչության պաշտպանությունն է։

Ինչպես միջազգային, այնպես էլ ներքին զինված ընդհարումների ժամանակ, խաղաղ բնակչության պաշտպանության հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ «Քաղաքացիական բնակչությունը, ինչպես նաև առանձին քաղաքացիական անձինք չպետք է լինեն հարձակման օբյեկտ» (հ. 14)։ Բացի այդ արգելվում է սովն օգտագործել որպես մարտական գործողությունների վարման մեթոդ և այդ նպատակով արգելվում է հարձակման ենթարկել, ոչնչացնել, դուրս բերել, կամ շարքից հանել քաղաքացիական բնակչության համար անհրաժեշտ օբյեկտները (հ. 14)։ Արգելվում է քաղաքացիական անձանց բռնի տեղափոխումը (հ. 17), ինչպես նաև արգելվում է հարձակման ենթարկել վտանգավոր ուժեր պարունակող կառույցները և կայանքները, դրանք են՝ ամբարտակները, պատնեշները և ատոմային էլեկտրակայանները, քանի որ դա կարող է հանգեցնել ծանր կորուստ-

ների քաղաքացիական բնակչության շրջանում։

Ներքին ընդհարման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը։ Վերոնշյալ 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներն ապահովում են երեխաների համար անհրաժեշտ հոգատարությունն ու օգնությունը։

II Լրացուցիչ արձանագրությունում կարևոր դեր ունի 5-րդ հոդվածը. այն վերաբերում է անձանց, որոնք ազատազրկվել են ներքին զինված ընդհարման պատճառով՝ անկախ այն բանից, թե նրանք ներկալվել են, թե կալանվել։

Հոդվածի իրավանորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակառակորդի իշխանության ներքո հայտնված անձանց իրավական կարգավիճակը զինված միջազգային և միջազգային բնույթ չկրող ընդհարումների պայմաններում տարբերվում են։ Միջազգային բնույթի զինված ընդհարման դեպքում վերոնշյալ անձանց իրավական կարգավիճակը սահմանված է. «Ռազմագերիների հետ վարվելու մասին» 1949 թ. Ժնևի կոնվենցիայով, ինչպես նաև I Լրացուցիչ արձանագրությամբ։ Իսկ ահա, II Լրացուցիչ արձանագրությունը ի տարբերություն I-ին Արձանագրության, որը սահմանում է կոմբատանտի կարգավիճակը և նախատեսում նրանց պաշտպանությունը ռազմական որոշ մեթոդներից և միջոցներից, այս առումով որոշակիորեն սահմանափակ է. «կոմբատանտ», ինչպես նաև «ռազմագերի» հակասություններն այստեղ պարզապես բացակայում են։ Միակ նորմը, որով սահմանվում է ռազմական գործողությունների մասնակիցների պաշտպանությունը, բովանդակվածէ 4-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունում. «Արգելվում է տալ ոչ մեկին կենդանի չթողնելու հրաման»։

II-րդ Արձանագրության մյուս բոլոր դրույթները ուղղված են զինված ընդհարմանը չմասնակցող կամ մասնակցությունը դադարեցրած անձանց պաշտպանությանը։ Ավելին՝ քաղաքացիական բնակչության պաշտպանությունը սահմանող 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական անձինք օգտվում են սույն մասով նախատեսված պաշտպանությունից, քանի դեռ նրանք զինված գործողություններին անմիջական մասնակցություն չեն ունեցել»։

Ինչպես Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածը, այնպես էլ II Արձանագրությունը չեն սահմանում գերեվարվելու դեպքում անօրինական զինված խմբավորման մասնակցի կարգավիճակը, այն

ընդամենը սահմանափակվում է մարդասիրական վերաբերմունքի երաշխիքով բոլոր այն անձանց հանդեպ, ովքեր ինչ-ինչ պատճառով վայր են դրել զենքը և դադարեցրել իրենց մասնակցությունը զինված ընդհարմանը, այսինքն՝ ապստամբները ռազմագերիներ չեն համարվում, իսկ ՄՄԻ-ում չկան որևէ սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեն երկրի պետական իշխանության մարմիններին ազգային օրենսդրության շրջանակում քրեական պատասխանատվության ենթարկել այն անձանց, ովքեր մասնակցում են ռազմական գործողություններին անօրինական զինված խմբավորման կազմում: Իսկ ահա քրեական պատասխանատվության վերաբերյալ Արձանագրության 6-րդ հոդվածով սահմանված են մի շարք կանոններ, մասնավորապես, պատշաճ դատաքննությունը, մեղադրյալին պաշտպանության բոլոր իրավունքների և միջոցների տրամադրումը, մեղադրյալի նկատմամբ դատավճիռ կայացնելը և պատիժն ի կատար ածելը միայն անկախության ու անազատության հիմնական երաշխիքներ ապահովող դատարանի կայացրած ակտի հիման վրա:

Արձանագրությունն արգելում է մահվան դատավճիռ կայացնել իրավախախտման պահին 18 տարին չլրացած անձանց, ինչպես նաև հղի կանանց և մանկահասակ երեխաներ ունեցող մայրերի նկատմամբ: Միաժամանակ նշված դատական երաշխիքների շրջանակներում պետությունը, որը դատական երաշխիքների շրջանակում հետապնդում է ապստամբներին, իրավասու է օրենքի ամենայն խստությամբ վերաբերվել վերջիններիս հետ:

Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման կողմերը պարտավոր են պահպանել Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի, II Լրացուցիչ արձանագրության և ՄՄԻ-ի սովորութային իրավունքի նորմերը: Այդ նորմերը երաշխավորում են մարդասիրական վերաբերմունք բոլոր այն անձանց հանդեպ, ովքեր հայտնվել են հակառակորդի իշխանության ներքո և պահանջում են, որպեսզի ռազմական գործողությունների ժամանակ վիրավորվածները (այդ թվում՝ նաև հակառակորդի կողմից) դուրս բերվեն ռազմի դաշտից և ապահովվի նրանց բժշկական օգնությունը առանց որևէ խտրականության:

ՄՄԻ-ը թույլատրում է անօրինական նպատակների դեմ ավելի ազդեցիկ ուժի կիրառումը՝ քաղաքացիական անձանց պաշտպանությանն ուղղված խիստ սահմանափակումների պահպանմամբ: Այդուհանդերձ, ծագած զինված ընդհարումը կողմերի իրավական պար-

տավորությունների համար լուրջ հետևանքներ է առաջացնում, մասնավորապես՝ կիրառված ուժի համաչափության, ինչպես նաև ուժի կիրառման տեսանկյունից։

Ռազմական գործողությունների ժամանակ ընդհարման կողմերը պարտավոր են պահպանել հետևյալ նորմերը՝ քաղաքացիական անձանց նկատմամբ ուղղակի հարձակման արգելքը, անխնա հարձակումները, հարձակման դեպքում համաչափության սկզբունքի պահպանման պարտավորությունը, ռազմական գործողությունների պլանավորման և անցկացման դեպքում քաղաքացիական բնակչության շրջանում կորուստներ հնարավորինս կանխման նպատակներով անվտանգության բոլոր միջոցների ձեռնարկման պարտավորությունը։ Հակամարտության յուրաքանչյուր կողմ պարտավոր է պահպանել ՄՄԻ-ի նորմերը, նույնիսկ եթե հակառակորդն այդպես չի վարվում, այլ կերպ ասած՝ ՄՄԻ-ով սահմանված պարտավորությունները հիմնված չէ փոխադարձության վրա։

Ավանդաբար միջազգային իրավունքը ենթադրում է երրորդ պետության միջամտությունը ներքին գործերին, քանի որ հիմնականում ներքին ընդհարումները մեծամասամբ կապված են միջազգային իրադարձությունների հետ և շատ հազվադեպ է, որ ընդհարումը բացառապես պայմանավորված է երկրի ներսում տիրող իրավիճակով։

Խոսքը վերաբերում է մարդասիրական միջամտություններին։ «Միջազգային միջամտության» հայեցակարգը ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական խնդիրներից է։ Ձևավորվող միջազգային իրավակարգի ենթատեքստում այս հայեցակարգի իրավաչափությունը, ինչպես նաև բովանդակությունն ու կիրառումը դասվում են միջազգային իրավունքի վիճահարույց և տեսականորեն իրարամերժ երկընտրանքների շարքին, որոնց լուծումները միանշանակ չեն։ Մարդասիրական դրդապատճառներով պետության ներքին գործերին միջամտելու խնդիրը ինքնին նորույթ չէ և տևական ժամանակ է, ինչ հանդիսանում է իրավագետների ուսումնասիրության առարկա, սակայն նշված հայեցակարգը վերջին շրջանում՝ մասնավորապես, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների կողմից Հարավսլավիայում իրականացրած «մարդասիրական միջամտությունից» հետո, մեծ հետաքրքրություն առաջացրեց։

Մարդու անքակտելի իրավունքների պաշտպանությանն ուղղված ռազմաուժային գործողությունները հիմնավորելու առաջին

փորձերը ձեռնարկվել են ավանդական միջազգային իրավունքի շրջանակում մարդասիրական իրավունքի ձևավորվելուց շատ ավելի վաղ: Ժամանակակից միջազգային իրավունքի հիմնադիր, հոլանդացի իրավագետ Հուգո Գրոցիուսն առաջիններից է, ով տալիս է «միջազգային միջամտության» տեսական հիմնավորումը և արդարացնում քաղաքացիների բնական պաշտպանությանն ուղղված պատերազմները՝ ուղղված ընդդեմ ակնհայտ անօրինականություն իրականացնող պետությունների:

Ընդհանուր առմամբ, «միջազգային միջամտության» հայեցակարգի տեսական մշակումը ներառել է երեք նախապայման. 1)բացարձակապես մարդասիրական նպատակների հետապնդում, 2) կոլեկտիվ գործողությունների նախապատվություն, 3) միջամտությունը կարող է նախաձեռնվել ի պատասխան դաժանության, վայրագության և մարդու հիմնարար իրավունքների խախտման:

XIX դարի վերջից սկսած «միջազգային միջամտության» հայեցակարգը մասնագետների մեծամասնության կողմից փաստացի ճանաչվեց որպես սովորութային իրավունքի բաղկացուցիչ մաս, թեև մի շարք իրավագետների կողմից նման գործողությունները որակվում են որպես ոչ լեգիտիմ:

Ցավոք, վերջին շրջանում միջազգային իրավակարգը պահպանելու ուղղությամբ ձեռնարկված որոշ գործողություններ ի ցույց դրեցին այն փաստը, որ իրականում միջամտող պետությունները երբեմն զենքի կիրառմամբ խաղաղապահ գործողությունների ներքո նախ և առաջ լուծում են իրենց քաղաքական և տնտեսական հարցերը: Այս տեսանկյունից մարդասիրական միջամտության հայեցակարգի հիմնավորվածությունը համոզիչ չէ:

Այդուհանդերձ ՄՄԻ-ի նորմերը չեն արգելում ուժի կիրառումը այն պետությունների հանդեպ, որոնք կոպտորեն խախտում են մարդու իրավունքները՝ այդ թվում ազգային կամ էթնիկ փոքրամասնությունների, կամ նույնիսկ սեփական ժողովրդի դեմ ուղղված ռազմական գործողությունների միջոցով: Նման ուժի կիրառման չափանիշները սահմանված են ՄԱԿ-ի Կանոնադրության 39-51-րդ, ինչպես նաև «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1951 թ. Կոնվենցիայի VIII հոդվածներով: Նշված հոդվածները ներառում են այն բոլոր պայմանները, որոնց առկայության պարագայում միայն հնարավոր է պետության դեմ ուժի կիրառու-

մը, դրանք են՝

- արձանագրվում են մարդու իրավունքների կոպիտ խախտումներ,
- ներքին զինված ընդհարման լուծման բոլոր խաղաղ միջոցներն սպառված են,
- պետությունը ներկայացրել է մարդու իրավունքների խախտումները դադարեցնելու և ապստամբների հետ խաղաղ բանակցություններ սկսելու վերաբերյալ վերջնագիր,
- առկա է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի համապատասխան որոշում:

Նշված գործողությունները կարող են կիրառվել ՄԱԿ-ի կամ ՄԱԿ-ի անդամ պետություններից մեկի նախաձեռնությամբ՝ մարդու իրավունքների ոլորտի համապատասխան Կոնվենցիայի հիման վրա[12]:

Ուսումնասիրվող թեմայի շրջանակում միջազգային իրավունքի նորմատիվ դաշտի, ինչպես նաև սովորութային իրավունքի ուժով ձևավորված վարքագծի կանոնների հետազոտությունը հանգեցնում են հետևյալ եզրահանգումների.

Միջազգային և միջազգային բնույթ կրող զինված ընդհարումների պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների էական տարբերությունը կայանում է նրանում, որ միջազգային մակարդակում բացակայում են մարդու իրավունքների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպություններ և միջոցառումներ, քանի որ քաղաքացիական պատերազմները դիտվում են որպես երկրի ներսում տեղի ունեցող իրադարձություն:

Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումները ժամանակակից պայմաններում հաճախ իրենց ավերիչ հետևանքներով և պատճառված վնասի չափերով նույնիսկ գերազանցում են միջազգային պատերազմների հետևանքները, ուստի դրանց իրավական կարգավորման անհրաժեշտությունը առավել հատուկ նշանակություն ունի: Այդ իսկ պատճառով ներքին ընդհարումների կանխման կամ խաղաղ լուծման խնդրի արդիականությունն ու կարևորությունը ժամանակակից միջազգային հանրության համար ընդունելի են դարձրել ներքին

[12]Учебное пособие по контролю за соблюдением прав человека.Университет Миннесоты, гл.XVI http://www1.umn.edu/humanrts/russian/monitoring/Rindex.html /

ընդհարման պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ուժի կիրառումը, որն արդեն միջազգային իրավունքի տեսանկյունից չի դիտարկվում որպես միջամտություն պետության ներքին գործերին։

Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների ժամանակ կիրառվող ՄՄԻ-ի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրա նորմերով չի սահմանվում տվյալ զինված ընդհարման օրինականությունը, այլ կարգավորվում են ընդհարման մասնակիցների կամ մասնակցությունը դադարեցրած անձանց գործողությունները, հարաբերությունները և սահմանափակում, որոշ դեպքերում նաև արգելում են պատերազմելու մեթոդներն ու միջոցները։ Իսկ ցանկացած բնույթի զինված ընդհարման դեպքում իրավունքի սկզբունքն այն է, որ հակառակորդ զինված ուժերի այն անձինք, ովքեր դուրս են եկել շարքից կամ ցանկացած այլ պատճառով դադարեցրել են իրենց մասնակցությունը ռազմական գործողություններին, ինչպես նաև քաղաքացիական բնակչությունը ցանկացած հանգամանքներում մարդասիրական վերաբերմունքի իրավունք ունեն, այդ թվում՝ կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք։ Այս պարագայում պետք է նշել, որ իր տարածքում սահմանադրական կարգ ու կանոնի հաստատման նպատակով պետության կողմից զինված ուժերի կիրառումը որակվում է որպես ծայրահեղ միջոց, թեև որոշ դեպքերում միայն դրա կիրառմամբ է հնարավոր լինում պաշտպանել մարդու անօտարելի իրավունքներն ու հիմնարար ազատությունները։

Վերջում պետք է փաստել, որ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների մասնակիցների՝ մարդու իրավունքների պահպանման ուղղությամբ պարտավորությունները իրավանորմերով ամրագրելը, բնականաբար, դեռևս չի նշանակում, որ այդ իրավունքները համատարած կիրառվելու և պահպանվելու են, քանի որ դրանց պահպանումը հիմնականում կախված է այն անձանցից, ովքեր պարտավոր են պահպանել այդ իրավունքները և կրել պատասխանատվություն կատարած արարքների համար։ Այդուհանդերձ, ցանկացած իրավանորմի սահմանումը ներգործում է մարդկանց վարքագծի վրա, ինչը տեղի է ունենում նաև զինված ընդհարման պայմաններում, և այս փաստը շեշտակիորեն կարևորում է զինված ընդհարումների պայմաններում ծագող հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի ստեղծման անհրաժեշտությունը։

Нарине Карапетян
Соискатель кафедры европейского и международного права ЕГУ

СПЕЦИФИКА ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА В УСЛОВИЯХ ВНУТРЕННИХ ВООРУЖЕННЫХ КОНФЛИКТОВ

Исходя из того, что вооруженные конфликты в целом характеризуются большой вовлеченностью гажданского населения, в статье определяется важность правового регулирования внутреннего вооруженного конфликта.

В частности, отмечается необходимость разработки правовых критериев дифференциации внутренних вооруженных конфликтов, беспорядков и других ситуаций< вызывающих внутреннее напряжение, а также допустимость ограничения неотъемлемых прав человека и пределы определения приемлемости этих ограничений в условиях конфликтов внутреннего характера.

В статье затрагивается вопрос "международного вмешательства» в условиях внутреннего вооруженного конфликта и в контексте формирующегося международного права автор попытался обосновать правомерность данной концепции.

Narine Karapetyan
Post graduate researcher of the YSU Chair of European and International Law

SPECIFICITY OF HUMAN RIGHTS PROTECTION IN THE CONTEXT OF INTERNAL ARMED CONFLICTS

Based on the fact that armed conflicts in general are characterized by greater involvement o the civil population, the article is determined by the importance of the legal regulation of internal armed conflict.

In particular, the need to develop legal criteria of differentiation of internal armed conflicts, riots and other situations causing internal stress, as well as permissible limitations of the inalienable rights of man and the limits of determination of the acceptability of these restrictions in situations of conflict internal character.

The article addresses the issue of "international intervention" in the internal armed conflict and in the context of the emerging international law the author has tried to legalize the validity of the concept.

Բանալի բառեր՝ *ներքին ընդհարում, միջազգային բնույթկրող ընդհարում, ներքին անկարգություն, ներքին լարվածություն, մարդու անքակտելի իրավունքներ, միջազգային միջամտություն։*
Ключевые слова: *внутренние конфликты, конфликты не международного характера, внутренних беспорядки, внутренняя напряженность, неотъемлемые права человека, международное вмешательство.*
Keywords: *internal conflicts, international conflicts, internal strife, internal tension, inalienable human rights, international intervention.*